

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԵՊՀ Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի 2022 թվականի  
նոյեմբերի 21-ին կայացած Գիտական Խորհրդի N2 նիստի

Նախագահ – Մ.Ա.Գրիգորյան

Քարտուղար – Ե.Ս.Մանուկյան

Ներկա էին՝ 36 անդամներից 33-ը (ցուցակը կցվում է):

Նիստին մասնակցում էին ԵՊՀ **ռեկտոր Հ.Հովհաննիսյանը**, ԵՊՀ զարգացման և նորարարությունների գծով **պրոռեկտոր Մ.Հովհաննիսյանը**, ԵՊՀ **գիտքարտուղար Մ.Հովհաննիսյանը**, ԵՊՀ ռեկտորի **օգնական Վ.Խալաթյան**, ԵՊՀ Ռազմավարական պլանավորման կենտրոնի **տնօրեն Ա.Բարաջանյան**,

Նիստի նախագահ առաջարկվեց դոց.Ս.Ռ.Սուվարյանի թեկնածությունը:

Առաջարկությունն ընդունվեց միաձայն:

Ս.Սուվարյանն առաջարկեց սահմանել հետևյալ աշխատակարգը. հաշվետվությունը ներկայացնելու համար հատկացնել մինչև 15 րոպե, ելույթների համար՝ 5 րոպե:

Առաջարկությունն ընդունվեց միաձայն:

**Օրակարգ**

1. Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկանի հաշվետվությունը 2021-2022 ուս.տարում կատարած աշխատանքների վերաբերյալ

/զեկ. դեկան Մ.Ա.Գրիգորյան/

Նիստի օրակարգը հաստատելուց հետո

**ԼՄԵՑԻՆ.** Աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի դեկան **Մ.Ա.Գրիգորյանի** հաշվետվությունը 2021-2022 ուս.տարում կատարած աշխատանքի վերաբերյալ (հաշվետվությունը կցվում է):

**ՀԱՐՑԵՐ ՏՎԵՑԻՆ.**

ԵՊՀ զարգացման և նորարարությունների գծով **պրոռեկտոր Մ.Հովհաննիսյանը** ցանկացավ ճշտել ֆակուլտետն ավարտելուց հետո մասնագիտությամբ աշխատող

շրջանավարտների տոկոսը: Հետաքրքրվեց կրթական ծրագրերի արդիականացման ուղղությամբ ֆակուլտետում կատարված աշխատանքների և ֆակուլտետում պատվերներով հետազոտական աշխատանքներ իրականացնելու մասին:

ԵՊՀ Ռազմավարական պլանավորման կենտրոնի տնօրեն **Ա.Բարաջանյանը** հարցրեց, թե որքանով է մոտեցել դրված խնդրին ֆակուլտետը զարգացման ռազմավարական ծրագրեր ներդնելու և իրականացնելու արդյունքում:

Դեկան **Մ.Ա.Գրիգորյանը** տրված հարցերի վերաբերյալ բավարար բացատրություն և պարզաբանում տվեց:

### ***ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.***

**դոց.Ս.Ս.Քելյանը** նշեց, որ դեկան Մ.Գրիգորյանի կողմից տարվող աշխատանքը ֆակուլտետում թիմային է և ունի ուսանողակենտրոն բնույթ: Իր խոսքում Ս.Քելյանը ողջունեց ռեկտորատի ներկայացուցիչների պարբերաբար հանդիպումները ֆակուլտետի աշխատակիցների հետ և հույս հայտնեց որ այն կկրի շարունակական բնույթ:

**դոց.Ս.Ս.Առաքելյանը** բարձրաձայնեց հաճախումների խնդիրը և առաջարկեց վերականգնել կուրսատորների ինստիտուտը: Նա բարձր գնահատեց դեկան Մ.Գրիգորյանի կատարած աշխատանքը և առաջարկեց բավարար գնահատել այն:

**դոց.Ս.Ս.Մկրտչյանը** դեկանի կատարած աշխատանքը գնահատեց բավարար և խոսեց ֆակուլտետում առողջ աշխատանքային մթնոլորտի վերաբերյալ, ինչպես նաև ուսումնական լաբորատորիաների միավորման ոչ ճիշտ մոտեցման շուրջ:

**պրոֆ.Վ.Պ.Վարդանյանն** առաջարկեց ընդունել դեկանի հաշվետվությունը և կատարած աշխատանքը գնահատել բավարար: Նա բարձր գնահատեց դեկան Մ.Գրիգորյանի կազմակերպչական դերը ֆակուլտետում ուսումնական, գիտական, կարգապահական աշխատանքները բարձր մակարդակի հասցնելու ուղղությամբ: Վ.Վարդանյանն առաջարկեց նաև հեռակա ուսուցում կազմակերպել բոլոր մասնագիտություններով:

**պրոֆ.Գ.Մ.Կարապետյանը** նշեց, որ երկար տարիների ընթացքում մասնակցում է ֆակուլտետում տարվող աշխատանքներին:

- Տարբեր տարիների ընթացքում ղեկավարել եմ ավարտական ատեստավորման հանձնաժողովը: Պետք է նշեմ, որ ղեկան Մ.Գրիգորյանի կողմից ատեստավորման քննությունները կազմակերպվում են բարձր մակարդակով, ներկայացված աշխատանքների ու թեզերի մեծ մասն ունեն հետազոտական բնույթ, ներկայացված են լինում պատշաճ մակարդակով և գնահատվում են հիմնականում բարձր միավորներով,-ասաց Գ.Կարապետյանը:

**պրոֆ. Պ.Էֆենդյանը** ղեկանի կատարած աշխատանքը գնահատեց բավարար և նշեց նրա առաջնային դերը ֆակուլտետում ուսումնական և հետազոտական աշխատանքների բարձր մակարդակն ապահովելու հարցում:

**պրոֆ Ս.Հ.Հայրոյանը** խոսեց ամբիոնների միավորման անարդյունավետության մասին և խոսքի ավարտին առաջարկեց ղեկանի կատարած աշխատանքը գնահատել բավարար:

**ՈւՆ նախագահ Լենա Մուրադյանը, ՈւԳԸ նախագահ Մարիամ Տաշյանը, ուսանող Սվետա Սահայկյանը.** Նշեցին ղեկանի հոգատարությունը ուսանողների նկատմամբ, նրանց կողմից բարձրացված հարցերին ականջալուր լինելու և ուսանողների կողքին լինելու: Ֆակուլտետի այսօրվա բարձր վարկանիշը դա ղեկանի և դասախոսների կատարած աշխատանքի արդյունք է:

**դոց.Ս.Ռ.Սուվարյան** Իր խոսքում նշեց ղեկան Մ.Գրիգորյանի կատարած դրական աշխատանքի մասին, ինչպես նաև մասնագիտության դիմորդների թվի նվազման պատճառների՝ կարևորելով մասնագետների համագործակցության դերի մասին: Առաջարկեց ղեկանի կատարած աշխատանքը գնահատել «բավարար»:

### ***Սահմանափակելով ելույթները***

**ԱՌԱՋԱՐԿԵՑԻՆ.** ղեկան Մ.Ա.Գրիգորյանի 2021/2022 ուս.տարում կատարած աշխատանքը գնահատել բավարար

### ***Քվեարկության արդյունքում՝ ԿՈՂՄ-32, ՁԵՌՆՊԱՀ - 1, ԴԵՄ-0***

**ՈՐՈՇԵՑԻՆ.** ղեկան Մ.Ա.Գրիգորյանի ներկայացրած հաշվետվությունը 2021/2022 տարվա կատարած աշխատանքի վերաբերյալ գնահատել «բավարար»:

Նիստի ավարտին ելույթ ունեցավ ռեկտոր **պրն.Հ.Հովհաննիսյանը** և պատասխանեց աշխատակիցներին հուզող հարցերին:

**Նիստի նախագահ**

**Ս.Ռ.Մուվարյան**

**Խորհրդի քարտուղար**

**Ե.Ս.Մանուկյան**